ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08-1

ՍԵՎԱՆԻ ԼԵՌՆԱՆՑՔ (ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ) ՀԵՌՈՒՍՏԱԿԱՅԱՆԻ H=180 Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ և ԱԼԻՔԱՏԱՐ ԿԱՄՐՋԱԿՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք. Երևան 19.08.2021թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Վ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տերմոպրոտեկտ» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Է. Զատինյան Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակմամբ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) Հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման* աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետը,

գ)Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին Պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը ընդունելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքը կատարել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային Աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի Հավելված 1-ով նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող Աշխատանքային օրվանից հաշված 20 /քսան/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ Պայմանագրի արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված Աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված Աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված Աշխատանքը՝

ա. համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 18 500 000 (տասնութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 5 550 000 (հինգ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի՝ Պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքի արդյունքը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են եղանակային պայմանները, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում եղանակային պայմանները թույլ չտան շարունակել աշխատանքները, և առաջանա դրանց պարտադրված ժամանակավոր դադար որևէ ժամկետով, ապա այն համարվելու է ֆորս-մաժորային՝ սույն պայմանագրի 7-րդ կետի համաձայն և պայմանագրի գործողության ժամկետը կողմերի փոխհամաձայնությամբ կարող է երկարաձգվել պարտադրված ժամանակավոր դադարի ժամկետով՝ չհաշված օրենքով նախատեսված՝ երկարաձգման ժամկետը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն Պայմանագիրը կազմված է 11 /տասնմեկ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898 /ստորագրություն/ Կ.Տ.		ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 15 փ., 11/3 «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ Հ/Հ 19300796814500 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 02283402 Հեռ. 093 85 95 14 e-mail: termoprotectllc@gmail.com /ստորագրություն/ Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«19» 08 2021 թ. կնքված
թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
							կատարման		
								Ժամկետը	
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը. Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը հազ. ՀՀ դրամ	ընդհանուր գինը հազ. ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	սկիզբ	ավարտ
2	45441120	«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնում և ներկում	դրամ	18 500 000	18 500 000	1	ՀՀ,Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնանցք /Սեմյոնովկա/ հեռուստակայան	Պայմանագրի կնքման օրվանից	2,5 ամիս

«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնում և ներկում

1. **Տեխնիկական բնութագիրը**

1.1 Կատարել «ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն ծավալաթերթ-նախահաշվի:

1.2 Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գործող անտենա-ալիքատարային համակարգերի ներկոտվելը:

1.3 Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերը, այդ թվում.

- նախաներկ՝ ԳՓ-021, ըստ ГОСТ 25129-82, կամ համարժեքը;
- ներկ՝ ՊՓ 115, ըստ ГОСТ 6465-76, կամ համարժեքը՝ կարմիր և սպիտակ: Ներկի երանգը նախապես անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ներկը պետք է լինի միևնույն խմբաքանակի արտադրության: Ներկի արտադրման և պահպանման ժամկետը, ինչպես նաև տեղափոխման պայմանները պետք է համապատասխանեն ГОСТ 6465-76 պահանջներին: Նախաներկի և ներկի համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն ГОСТ-երին վերջիններիս համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /սերտիֆիկատ/: Բացի այդ, Պատվիրատուի պահանջով նախաներկը և ներկը կարող են ենթարկվել լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների;
- ուայթ սպիրիտ (լուծիչ):

Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ այլ նյութեր, տեխնիկական միջոցներ, գործիքներ և պարագաներ, ձեռք են բերվում կամ ապահովվում են Կապալառուի կողմից

1.4 Ներկման աշխատանքները կատարել համաձայն СНиП 2.03.11-85 "Защита строительных конструкций от коррозии" հետևյալ տեխնոլոգիական հերթականությամբ.

1.4.1 Ժանգի մաքրում մետաղական խոզանակներով, քերիչներով կամ մեխանիկական եղանակով: Ներկվող մակերևույթի մաքրության աստիճանը հասցնել 3-ի՝ ըստ ГОСТ 9.402-2004:

1.4.2 Ներկվող մակերևույթների փոշեզերծում:

1.4.3 Ներկվող մակերևույթների յուղայնազերծում ուայթ սպիրիտով:

1.4.4 Վնասված մակերեսների մածիկացում:

1.4.5 Նախաներկում ԳՓ-021 (ГОСТ 25129-82) մակնիշի նախաներկով, 1 շերտ, շերտի հաստությունը 20-25 մկմ:

1.4.6 Ներկում ՊՓ 115 (ГОСТ 6465-76) էմալով, 2 շերտ:

1.4.7 Ներկի շերտի ընդհանուր հաստությունը պետք է լինի ոչ պակաս 80 մկմ-ից:

1.4.8 Ներկի շերտը պետք է լինի համասեռ՝ առանց հոսահետքերի և փչուկների:

1.5. Ներկման աշխատանքներն իրականացնել բարձր ճնշման ագրեգատների միջոցով: Ընդ որում, խտացված օդը պետք է զերծվի փոշուց և խոնավությունից:

1.6. Կոնստրուկցիաները ներկել իրար հաջորդող սպիտակ և կարմիր գույներով՝ ըստ գոյություն ունեցող հերթականության:

1.7. Ներկման աշխատանքները անհրաժեշտ է կատարել չոր մակերևույթների վրա, օդի ջերմաստիճանը 15^0 C-ից ոչ պակաս, հարաբերական խոնավությունը մինչև 80%, քամու արագությունը՝ մինչև 10 մ/վրկ պայմաններում:

.8. Աշխատանքները կատարվելու են գործող ալեհավաքների և ալեցիրների հարևանությամբ, գերբարձր հաճախականային ճառագայթման ազդեցության պայմաններում, որից պաշտպանվելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ արտահագուստ և միջոցներ:

1.9. Գործող անտենաների անմիջական հարևանությամբ կատարվող աշխատանքները, որոնց իրականացումը կպահանջի հեռարձակման տեխնիկական միջոցների անջատում, պետք է կատարվեն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով:

1.10. Աշխատանքներ կատարողները խստորեն պետք է պահպանեն բարձրության վրա աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները: Կապալառուն ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների և վնասվածքների համար:

2. Աշխատանքների ընդունման կարգը

2.1. Կատարված աշխատանքների ընդունումը համաձայն՝տեխնիկական վերահսկողության եզրակացության, СНиП III-4-80 ч. III "Правила производства и приемки работ" և СНиП 3.04.03-85* "Защита строительных конструкций и сооружений от коррозии":

2.2 Աշխատանքների արդյունքները ձևակերպվում են հանձնման-ընդունման ակտով:

3. Երաշխիք

3.1. Ներկի շերտի պահպանման երաշխիքային ժամկետ է սահմանվում 3 (երեք) տարի՝ Աշխատանքի հանձնման-ընդունման պահից:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/Հ	հիմնավորումը	աշխատանքների,ծախսերի անվանումը	չափման միավորը	քա-նակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար (հազ. դրամ)	Ընդհանուրի արժեքը (հազ. դրամ)
1	13-263	Մետաղական կոնստրուկ-ցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով	ք. մ	850,0	0,83	705,5
2	13-265	Մետաղական կոնստրուկ-ցիաների փոշեզերծում	ք. մ	3200,0	0,175	560
3	13-270	Մաքրած մակերեսի յուղազերծում	100 ք. մ	8,5	495,435	4211,198
4	13-126	Վնասված մակերևույթների մածիկացում	100 ք. մ	0,1	223,302	22,3302
5	13-121	Մետաղական կոնստրուկ-ցիաների նախաներկում	100 ք. մ	8,5	115,065	978,0525
6	34-191 K=0,66	Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	65,0	700,74	45548,1
7	34-190 K=0,66	Խողովակային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	265,0	69615	18447975
		Ընդամենը				18 500 000
		Ընդհանուրը				/100%/

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898 /ստորագրություն/ M.P.		ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 15 փ, 11/3 «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ Հ/Հ 19300796814500 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 02283402 Հեռ.093 85 95 14 e-mail: termoprotectllc@gmail.com /ստորագրություն/ M.P.

Հավելված N 2
«19» 08 2021թ. կնքված
Թիվ ՀՀՌՑ-ԳՀԱՇՁԲ-21/08-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45441120	«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնում և ներկում	-	-	-	-	-	-	-	5 550 000	5 550 000	18 500 000	18 500 000	18 500 000	18 500 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Կանխավճարի հատկացման առավելագույն չափը՝ պայմանագրի գնի մինչև 30%-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898 /ստորագրություն/ Կ.Տ	ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 15 փ., 11/3 «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ Հ/Հ 19300796814500 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 02283402 Հեռ.093 85 95 14 e-mail: termoprotectllc@gmail.com /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 3
« 19 » 08 2021թ. կնքված
ՀՀՌՅ-ԳՀԱՇՁԲ-21/08-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ Աշխատանքները՝

N	Կատարված Աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » 08 2021թ. կնքված
ՀՀՌՅ-ԳՀԱՇՁԲ-21/08-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն